
**«ԵՐԿԲԵՐԱՆ ԲՐԻՉ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՅԻՆ
ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Ա. Ա. ԱԲՐԱՀԱՍՅԱՆ

Հողափոր գործիքների շարքում կարևոր տեղ է գրավում երկբերան բրիչը, որը հայերենի բարբառներում կոչվել է բազմաթիվ բառանուններով՝ *փայտաստ, քլունգ, խազմա, չափա, կիրկա, հողորագ, թոխր, մարկեղ, ըրկոսին, բայթա, թիրախ, լոմ, խաչա, խօտկեռ, ծըկօտեզ՝, պիպու, փիյիչ, քուլբա* և այլն, որոնց մեծ մասը փոխառություններ են:

ա. Փայրայք

Հ. Աճառյանը բառանունը փաստել է «Փայտ» հոդվածում¹, Ս. Մալխասյանը նշում է, որ այն կազմված է *փայտ* և *հատանել* բաղադրիչներից²:

Փայրայք բառանունը վկայված է դեռևս V դարից: Այն գործածվել է երկու իմաստով՝ որպես «տապար, կացին» և որպես հողը փորելու գործիք՝ «երկաթե բրիչ»: «Տապար, կացին» նշանակությամբ բառանունը հիմնականում գործածվել է Աստվածաշնչի գրքերում³, որոնցից օրինակներ են բերված ՆՀԲ-ում՝ առանց աղբյուրը նշելու⁴: Գտել ենք ոսկեդարյան մի վկայություն ևս, որը հղված չէ ՆՀԲ-ում. «... սոյնպես ես որ *զփայտաստ* իսկ ձգիցեն, ես ի ծանրութենէ երկաթոյն՝ ի սոյն ես ի ձեռաց իսկ երեսի հարուածն ի բազմապատիկ հարուածոյն, որ ի վերայ նորա են, գուշակէ գեղեպն»⁵:

Փորելու գործիք նշանակությամբ *փայտաստ* բառանունն առկա է Ագաթանգեղոսի երկում⁶: Գտել ենք մի այլ վկայություն, որը հղված չէ ՆՀԲ-ում. ընդ որում, այդտեղ նկարագրված է երկրագործությանը վերաբերող մի ամբողջական գործընթաց. «...այլ որպէս հաճոյ թուեցա միաբանելոց ամենեցուն՝ առն իւրաքանչիւր արարեալ *փայտաստ երկմատնի*, և այնիս խարխարեալ յուզեն գթանձրահող հովտացն, սերմանելով ի նմա ցորեան և գարիս, և թէ այլ ունոք իցեն, ի պէտս կելոյ մարդկան. և ի չափ հասեալ հասկացն՝ ծայրախուզ հնձելով ոտնաչափ կասեալ մարդացի տան հողոնցն հոսելով զարդինս շեղոցն. և արկեալ ի շտեմարանս,

¹ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), հ. Դ, Եր., 1979, էջ 478:

² Տե՛ս **Ս. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. Դ, Եր., 1945, էջ 485:

³ Տե՛ս Բ Օր. ԺԹ 5, Ա Թագ. ԺԳ 20, Սաղմ. ՀԳ 6, **Ես. Ժ 15** (ըստ՝ Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց, յաշխ. Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, Վենետիկ–Ս. Ղազար, 1805):

⁴ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (ՆՀԲ), հ. Բ, Եր., 1980, էջ 931:

⁵ Կանոնք **Քարսի Կեսարացոյ**, Ե – Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Հակոբյանի, հ. Ա, Եր., 1964, էջ 339:

⁶ Տե՛ս **Ագաթանգեղեայ** Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Էջմիածին – Տփղիս, 1909, §766:

զնոյն դարձեալ ինքեանք լետուն ի ձեռն երկանի...»⁷: Գ.Կարախանյանը նշում է, որ *երկմատնի փայտատ* կոչված գործիքը պահպանվել է միայն համշենահայերի մոտ⁸:

Բառանունը գործածվել է նաև հետագա դարերի հայ մատենագրության և թարգմանական գրականության մեջ: ՆՀԲ-ն հղել է Եփրեմ Ասորուն, Փիլոն Ալեքսանդրացուն, որոնց գործերում բառանունը գործածվել է «տապար, կացին» նշանակությամբ, և Ներսես Լամբրոնացու, Ներսես Շնորհալու գործերը, «Վարք սրբոց հարանց» ժողովածուն, որոնցում բառանունը գործածվել է «երկբերան բրիչ» նշանակությամբ: Գտել ենք ՆՀԲ-ում չհղված հետհինգերորդարյան այլ վկայություններ ևս. «...և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ *երկմատնի փայտատովք* սերմանեալ...»⁹, «...և զոմն յեկելոցն առ նա աղաչեաց բերել նմա հողաբիր մի երկմատնի և *փայտատ* և սակաւ մի ցորեան»¹⁰, «Այլ և թիւս քսան հազարաց արանց արկեալ ռամկաց Հայոց և տաճկաց ամենայն աշխարհաց ունելով ի ձեռս իրեանց որթուց և թիաց, տապարաց, և կացնաց, բահաց, և *փայտատաց*, բրիչ առանց հիմանց, այլ և խիստ էառ հարկս ի ժողովրդենէ արտաքոյ նոմոսաց իրեանց»¹¹:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից հավաքված՝ Հայերենի բարբառագիտական ատլասի (ՀԲԱ) նյութերում (ընդգրկված է հայերենի բարբառների շուրջ 500 խոսվածք) բառանունն իր հնչյունական տարբերակներով գրանցվել է շուրջ 120 խոսվածքներում, սակայն գրաբարյան ձևով ոչ մի խոսվածքում գրանցված չէ: Մոկսի Խալենց գյուղի խոսվածքում գրանցված է *փայտատ*, իսկ Մամուտանց գյուղախմբի խոսվածքներում՝ *փատատ* և *փատատ* հնչյունական տարբերակները: Գրաբարյան ձևով բառը չենք գտել նաև բարբառագիտական գրականության մեջ: ՀԲԱ նյութերում գրանցված *փտատ* բառանունը վկայված է միջին հայերենում¹²:

Փտատ տարբերակը գրանցվել է 48 խոսվածքներում՝ ընդգրկելով Մուշի (10 խոսվածք), Վանի (27), Կարինի (Ախալքալաք՝ 7), պարսկահայոց (4) բարբառները: Վանի Շատախի խոսվածքում գրանցվել է *փտատ* տարբերակը:

Փեղաղ // *փեղատ* տարբերակը գրանցվել է 30 խոսվածքներում՝ ընդգրկելով Խարբերդ-Երզնկայի (2), Սեբաստիայի (5), Կարինի (11), Բուն Սասունի (4), Մուշի (4), Համշենի (3), Վանի (1) բարբառները: Եզակի հնչաձևերով տարբերակներ են գործածվել Մալաթիայում՝ *փեղաւղ*, Օրդուում՝ *փեղաթ*, Օրդուի Չիբլուխու գյուղում՝ *փեղաւթ*, Ախալքալայի Ջուղա և Ծղալթբիլա գյուղերում՝ *փեթատ*:

⁷ **Եղիշէ**, Յայլակերպութիւնն Քրիստոսի. – Սրբոյ Հօրն մերոյ **Եղիշէի** վարդապետի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 237:

⁸ Տե՛ս **Գ. Կարախանյան**, Հայոց ժողովրդական մշակույթը (հանրագիտարան երկու հատորով), հ. Ա, Եր., 2003, էջ 182:

⁹ **Թովմայի վարդապետի Արծրունոյ** Պատմութիւն Տանն Արծրունեաց, ի լոյս էաձ Բ. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 121:

¹⁰ **Ս. Աբանասի Ալեքսանդրիոյ հայրապետի** Ծառք (թուղթք և ընդդիմացութիւն), Վենետիկ–Ս. Ղազար, 1899, Ծառ Լ, էջ 578–579:

¹¹ Պատմութիւն **Առաքել վարդապետի Գարիժեցոյ**, Վաղարշապատ, 1896, գլ. ԾԵ, էջ 617, նաև՝ **Հովհաննիսիկ Ծարեցի**, Ժամանակագրություն.– Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Եր., 1956, էջ 248:

¹² Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, հ. 2, Եր., 1992, էջ 415:

Փիղաղ // *փիղաստ* տարբերակը գրանցվել է 27 խոսվածքներում՝ ընդգրկելով Եդեսիայի (1), Բուն Սասունի (9), Տավորիկ-Մոտկանի (6), Մուշի (10) և Գարաբաղի (1) բարբառները: Մոտկանի Կրիստ գյուղի խոսվածքում գործածվել է *փիտաստ* եզակի հնչյունական տարբերակը:

ՀԲԱ նյութերում գրանցվել են նաև հետևյալ հնչյունական եզակի տարբերակները՝ *փէղող* (Բեյլան), *փիղող* և *փիղոթ* (Ջեյթուն), *փիղող* (Սվեդիա), *փուղող* (Քեսար):

Փիղող տարբերակը փաստել է նաև Տ. Անդրեասյանը Սվեդիայի Յոդուն-Օլուկի խոսվածքում¹³: Ն. Սկրտչյանը *փէտաստ* տարբերակն արձանագրել է Գամիլրքի խոսվածքում¹⁴: Ջեյթունի բարբառում գրանցվել է նաև *փիտտոտ* հնչյունական տարբերակը¹⁵:

Ի դեպ, *փէտաստ* բառանվան ծագման շուրջ կան տարբեր տեսակետներ: Հ. Գազանճյանը, որ *փէտաստ* տարբերակն է արձանագրել Եվրոկիայի բարբառում, նշում է, թե բառի ստուգաբանությունը եթե *փայտ + հատ* է, պետք է տապար նշանակությունն ունենար, «բայց զարմանալի է որ բրիչ նշանակութեամբ կը գործածուի Եւրոկիոյ բարբառին մէջ»¹⁶: Կ. Գաբիկյանը կարծում է, որ *փէտաստ* բառը, որ բրիչ է նշանակում, փայտատ-կացնի հետ որևէ կապ չունի. այն հողը, քարը փետել-հատանելու գործիք է, և *փետ*-ը *փետել* բայի արմատն է¹⁷: Ն. Սկրտչյանը նույնպես նշում է այդ արմատը՝ նույնիսկ այն համարելով աքքադական փոխառություն (petū/pīt- «մերկացնել, բացել», «քանդել, փոս փորել» ձևից)¹⁸: Այդ տեսակետը հերքել են Գ. Ջահուկյանը և Ի. Գյակոնովը: Գ. Ջահուկյանը նշում է, որ բարբառային *փէտաստ* բառը ծագում է ոչ թե *փետել*, այլ *փայտաստ* բառից (*փայտ + ատ /հատ-ա-նեմ-ի հատ-ից/*)՝ սկզբում նշանակելով «կացին» և հետագայում միայն ձեռք բերելով «երկբերան բրիչ» նշանակությունը¹⁹: Ի.Գյակոնովը նույնպես նշում է *փէտաստ*-ի՝ *փայտաստ*-ի հնչյունափոխությունից առաջանալու հանգամանքը՝ հերքելով նրա՝ աքքադերենից փոխառյալ լինելը²⁰:

Փէտաստի՝ փայտաստ-ից առաջանալու մասին են խոսում նաև տարբեր բարբառներում *ե* հնչյունի և *այ* երկբարբառի հնչյունափոխությունները, ինչին չեն անդրադարձել վերոնշյալ հեղինակները:

¹³ Տե՛ս Տ. Անդրեասյան, Սվեդիայի բարբառը (Քիսթինըզի լեզուն), Եր., 1967, էջ 386:

¹⁴ Տե՛ս Ն. Ա. Սկրտչյան, Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը, Եր., 2006, էջ 392:

¹⁵ Տե՛ս Ուլնիա կամ Ջեյթուն, լեռնային աան ի Կիլիկիա, նկարագիր տեղական, կենսական, բանասիրական եւ լեզուաբանական, գրեց Յ. Յ. Ալլահվերտեան, Կ.Պոլիս, 1884, էջ 205:

¹⁶ Յ. Գազանճեան, Եւրոկիոյ հայոց գաւառաբարբառը, մասն Ա եւ Բ, ծայնագիտութիւն, բառացոյցակ, բերականութիւն, առածներ, ոճեր եւ ասացուածներ (=Ազգային մատենադարան ԼԴ), Վիեննա, 1899, էջ 62:

¹⁷ Տե՛ս Կ. Գաբիկեան, Բառգիրք Սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, 1952, էջ 548:

¹⁸ Տե՛ս Ն. Ա. Мкртчян, «Отклонения» от закономерностей армянского языка в свете данных аккадского языка. – ՊԲՀ, 1979, № 4, էջ 220, 225, նույնի՝ Семитские языки и армянский, Ер., 2004, էջ 199–120:

¹⁹ Տե՛ս Գ. Б. Джаукян, Об аккадских заимствованиях в армянском языке. ՊԲՀ, 1980, № 4, էջ 97:

²⁰ Տե՛ս Ի. М. Дьяконов, К древневосточному субстрату в армянском языке. ՊԲՀ, 1981, № 1, էջ 73–74:

Հ.Աճառյանը Համշենի բարբառի Մալայի և Ճենիկի շրջանի խոսվածքներում փաստել է *փսնդաղ* (*փայտատ* > *փսնդաղ*) տարբերակը՝ նշելով, որ այդ խոսվածքներում հայերենի *այ* երկբարբառը հնչյունափոխվում է ոչ թե *է*-ի, որը բնորոշ է Համշենի Տրապիզոնի շրջանի խոսվածքներին, այլ *սի*-ի (ինչպես *հայր* > *հսր*, *փայտ* > *փսր*, *գայլ* > *կ'սլ*, *քայլել* > *ք'սլուշ*, *փայտատ* > *փսնդաղ* և այլն)²¹: Ինչ վերաբերում է նշված խոսվածքներում հնարավոր *փետատ* > *փսնդաղ* հնչյունափոխությանը, ապա հայտնի է, որ ընդհանրապես այդ բարբառում բազմավանկ բառերի առաջին վանկի բառամիջյան *ե*-ն հնչյունափոխվելիս միշտ դառնում է *է*, բացառությամբ մի քանի դեպքերի, երբ *ե*-ն սղվում է, իսկ եզակի դեպքերում՝ դառնում *ը*, *ը*, *ի* կամ *օ*²²: Համենայն դեպս, այդ բարբառի համար նշված չէ որևէ դեպք, երբ բազմավանկ բառի առաջին վանկի բառամիջյան *ե*-ն հնչյունափոխվի *սի*-ի: Հետևաբար, այդ բարբառի Մալայի և Ճենիկի շրջանի խոսվածքներում առկա *փսնդաղ* բառաձևը ծագում է *փայտատ*-ից (ենթարկվելով այդ խոսվածքներին հատուկ *այ* > *սի* հնչյունափոխությանը) և ոչ թե *փետատ*-ից:

Վանի բարբառի 25 խոսվածքներում գրանցվել են *փետատ*, առանձին խոսվածքներում՝ *փեդատ* (գ. Գյարմավ) և *փետաօտ* (ք. Շատախ) հնչյունական տարբերակները: Այդ բարբառում նույնպես *փետատ* > *փետատ* հնչյունափոխությունը հնարավոր չէ: Նկատի ունենալով, որ այդ բարբառում *փետել* բայի դիմաց ունենք *փիտել* բառաձևը²³, իսկ բարբառի ոչ մի խոսվածքում *փիտատ* տարբերակ չի գրանցվել, մնում է ենթադրել, որ վերոնշյալ խոսվածքներում գրանցված տարբերակները ծագում են *փայտատ* ձևից: Եվ դա օրինաչափ է Վանի բարբառի համար, քանի որ այդտեղ բառամիջի *այ* երկբարբառը բաղաձայնից առաջ դառնում է *է*, ինչպես *հայր* > *խեր*, *փայտ* > *փետ*, *կայծակ* > *կեծակ* և այլն²⁴:

Մոկսի Խալենց գյուղի խոսվածքում գրանցվել են *փսնդատ*, իսկ Մամռտանց գյուղախմբի խոսվածքներում՝ *փատատ* և *փստաօտ* հնչյունական տարբերակները: Մոկսի խոսվածքում բառամիջի *ե*-ն հնչյունափոխվում է *ի*-ի և *է*-ի, իսկ *այ* երկբարբառը՝ հիմնականում *սի*-ի և *է*-ի²⁵:

Նշված օրինաչափությունները նույնպես խոսում են *փետատ*-ի՝ *փայտատ*-ի հնչյունափոխությունից առաջանալու տեսակետի օգտին:

Բացի այդ՝ դեռևս V դարից *փայտատ* բառը վկայված է ոչ միայն «կացին», այլև «բրիչ» (հողը փորելու գործիք) նշանակությամբ: Եթե ընդունենք, որ *փետատ* բառաձևը կազմված է *փետել* բառի *փետ* բայարմատից, ապա գործիքի գրաբարյան *փայտատ* անվանումը ի՞նչ եղավ հետագայում:

Կ. Գաբրիլյանը Սեբաստիայի բարբառի ուսումնասիրությանը նվիրված գրքում *փետատ* բառը գրանցել է *փետատ* ձևով՝ ելնելով իր վերոնշյալ տեսակետից: Մինչդեռ ՀԲԱ նյութերում Սեբաստիայի բոլոր խոսվածքներում գրանցվել է *փեդաղ* տարբերակը:

²¹ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Եր., 1947, էջ 35:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 26–27:

²³ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Եր., 1952, էջ 33:

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 46–47:

²⁵ Տե՛ս Մ. Հ. Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի.– Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), հ. 1, Եր., 1982, էջ 117, 127:

Մեբաստիայի բարբառում Կ. Գաբիկյանը արձանագրել է նաև *փետրտել* «փետաստով փորել, բրել» բայը²⁶:

Բարբառագիտական գրականության մեջ գրանցվել են նաև բառակազմական տարբերակներ: Մուշի բարբառում փաստվել է *փետրտոր* «տապարաոր, տապարով զինուած»²⁷ ածանցավոր բառը: Ջեյթունում գործածվել են *քոքի փիտտո* (արմատներ հանելու համար) և *կազի փիտտո* (գազի փշեր կտրելու համար) անվանումներով երկբերան բրիչները²⁸:

Ակնի բարբառում գործածվել է *փատտոր* «բրոր» բառը, որ նաև ունի փոխաբերական իմաստ՝ «բիրտ մարդ» (բարբառում *փայտ* բառը հնչյունափոխվում է *փատ-ի*)²⁹: *Փէտատ* բառի՝ փոխաբերական իմաստով գործածության ուշագրավ օրինակներ կան Մեբաստիայի բարբառում՝ «ծոյլ, բթամիտ (աշակերտ)» և «փիստ տգեղ ու անճարակ կին»³⁰:

Կան նաև *փայտատ* և *փետատ* բառերով կազմված արտահայտություններ և դարձվածքներ. *բահ-փայտատով կարդալ գիտցող* «կարդալ չգիտցող (մարդ)» (Վան)³¹, *օշ թի կ'ուգե, օշ փետատ. հէ'ն թի հէ'ն փետատ* «չափազանց լիրբ հարս, առնանցը տունը բաժանում ձգող. ինք իբրև թի ու փետատ՝ այդ տունը քանդող», *փետրտեն անցնել* «հիմնայատակ քակել, քանդել» (Մեբաստիա)³²:

բ. Քլունգ

Հայերենի բառարաններում բառի ստուգաբանությունը չենք գտել: Կարծում ենք, որ այն ծագում է պարսկերեն **kolāng** «բրիչ, հողորագ, բահ» ձևից³³: Ինչ վերաբերում է փոխառության աղբյուրին, ապա բացառված չէ, որ որոշ խոսվածքներում այն փոխառվել միջնորդ լեզվից՝ թուրքերեն **külünk** «բրիչ» ձևից³⁴:

Բառանունը վկայված է XVII դ. հայ մատենագրության մեջ. «... քանզի էառ ի ձեռն իր մուրճ, որ է *քլունկ* և սկսա շրջագայիլ ի մեջ վանիցն...»³⁵:

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 250 խոսվածքներում՝ ընդգրկելով արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի (16), Համշենի (2), Մուշ-Տիգրանակերտի (32), Վանի (37) և արևելյան խմբակցության Արարատյան (82), Խոյ-Մարաղայի (44), Ղարաբաղ-Շամախիի (37) բարբառախմբերն ու միջբարբառախմբերը:

Քլունգ // *քլունկ* (*քրլունգ* // *քրլունկ*) (նաև համապատասխան *ք'րլունգ*, *քրլունգ*, *ք'րլունգ'* և նման հնչյաձևերով) տարբերակն ամենատարածվածն է (193 խոսվածք)

²⁶ Տե՛ս Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 548:

²⁷ Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն գառնական բառարան (ՀԳԲ) (= Էմիլեան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, 1913, էջ 1063:

²⁸ Տե՛ս Վ. Հ. Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 82, 87:

²⁹ Տե՛ս Մ. Ս. Գաբրիելեան, Ակնայ գառնաբարբառը եւ արդի հայերեն լեզուն, Վիեննա, 1912, էջ 349:

³⁰ Տե՛ս Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 548:

³¹ ՀԳԲ, էջ 1063:

³² Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 548:

³³ Տե՛ս “Персидско-русский словарь”, т. 2, М., 1985, էջ 343:

³⁴ Տե՛ս, օրինակ, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ, Եր., 1951, էջ 376, Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 252, Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Եր., 1975, էջ 542, և այլն:

³⁵ Պատմութիւն Առաքել վարդապետի Գարիժեցոյ, գլ. ԼԸ, էջ 501–502:

և ընդգրկում է Երևանի կամ Արարատյան (46), պարսկահայոց (26), Բայազետի (6), Գիադինի (4), Վանի (28), Խոյ-Մարաղայի (34), Ղարաբաղի (13), Ղազախ-Կիրովաբադի (5), Պոլսի (5), Կարինի (3), Մուշի (22), Համշենի (2) միջբարբառներն ու բարբառները:

Քուլունգ (քուլընգ // քուլինգ) (նաև համապատասխան *քուլինգ, քուլունգ, ք'ուլունգ'* և նման հնչաձևերով) տարբերակը գրանցվել է Ասլանբեկի (1), Եվդոկիայի (1), Հավարիկի (1) բարբառներում, Պոլսի (2), Կարինի (4), Սասունի (1), Մուշի (8), Վանի (3), Երևանի կամ Արարատյան (4), Խոյ-Մարաղայի (9), Ղազախ-Կիրովաբադի (5), Շամախիի (2) բարբառների որոշ խոսվածքներում (41 խոսվածք): Նախիջևանի Ազա գյուղի խոսվածքում գրանցվել է *չուլունջ* բառաձևը: Հ. Մուրադյանը Կարճևանի խոսվածքում փաստել է *ք'ուլունգ'* տարբերակը, որը գետեղել է բարբառային բառերի շարքում³⁶:

Առանձին տարբերակներ են գրանցվել Ղարաբաղի բարբառի Գորիսի շրջանի խոսվածքներում՝ *քրլունգ // քրլունգ* (4), *քրլունգնը* (Խնձորեսկ), *ք'ուլունգնը* (Քարահունջ), *ք'ուլունգ'ուն* (Կոռնիձոր): Այդ բարբառում գրանցվել են նաև *քուլէյին* (Հին Թաղար), *ք'ըլյոյն* (Տունի) (երկուսն էլ Ղարաբաղում), *ք'ըլյոյնը* (Խանազադ), *քիլունգ'* (Սարդու) (երկուսն էլ Իրանի Ղարաբաղում) տարբերակները: Հետաքրքիր է, որ *քրլունգ'* տարբերակ է գրանցվել նաև Շատախի Արմշատ գյուղի խոսվածքում: Արևմտյան խմբակցության բարբառներում եզակի տարբերակներ նույնպես կան. Բերկրիի Խաչան գյուղում գրանցվել է *ք'ուլէնգ'*, Բուլանըխի Լիզ գյուղում՝ *քուլենգ*, իսկ Բուլանըխի Բոստաքյանդ գյուղում՝ *փրլունգ* (Սասունում *փլունգ* են անվանվել սրածայր փայտը, ցիցը³⁷): Ղարաբաղում նաև *քլոլոգն* տարբերակի գործածությունն է վկայել Հ. Հովսեփյանը³⁸:

Ա. Սուքիասյանը որպես «փորել, թոխրել» բառերի հոմանիշ արձանագրել է *քլնգել* բառը՝ չնչելով աղբյուրը³⁹:

գ. Թոխր

Թոխրը հողը փորելու սուր երկաթյա ծայրով և կարճ փայտյա կոթով բրիչ է⁴⁰: Հ. Աճառյանը, անդրադառնալով հայերենի վրա վրացերենի ազդեցությանը, առանձնացնում է մի խումբ բառեր, որոնք «բուն Հայաստանի հեռու գավառների ժողովուրդը ... վրացերենից փոխ առնելով մտցրել է իր բարբառի մեջ»: Դրանց թվում նշվում է նաև *թոխր* բառանունը. «*Թոխր*. Գրք. «բրիչ», *թոխրել* Գրք. «բրիչով փորել», Հմշ. «հողը բրիչով փշրել մանրել» < վրաց. *թխրա* «փորել»⁴¹:

ՀԲԱ նյութերում բառը հնչյունական տարբերակներով (*թոխըր, թոխըր, թոխուր*) հիմնականում ընդգրկված է հայ բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղի (60 խոսվածք) և Ղազախ-Կիրովաբադի (14 խոսվածք) բարբառներում: *Թոխըր* և *թոխուր* տարբերակներն արձանագրվել են նաև Նախիջևանի 5 գյուղերի խոսվածքներում: Լռու ճոճկան գյուղի խոսվածքում գրանցվել է *թոխի*,

³⁶ Տե՛ս Հ. Գ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Եր., 1960, էջ 234:

³⁷ Տե՛ս Վ. Ա. Պետոյան, Սասունի բարբառը, Եր., 1954, էջ 163:

³⁸ Տե՛ս Հ. Հովսեփյան, Ղարաբաղի հայերը, հ. 2, Բանահյուսություն, Եր., 2009, էջ 628:

³⁹ Տե՛ս Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2003, էջ 1206:

⁴⁰ Տե՛ս ՀԳԲ, էջ 372:

⁴¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ, էջ 224:

Կիրովաբադի խոսվածքում՝ *թոխիր*, Սյունիքի Շինուհայր գյուղի խոսվածքում՝ *թուխըրը*, իսկ Իրանի Մուժումբար քաղաքի խոսվածքում՝ *թօրխ* եզակի տարբերակները: Հետաքրքիր է, որ բառը, թեև հազվադեպ, բայց հանդիպում է նաև արևմտյան խմբակցության բարբառներում: Համշենի բարբառի Ճենիկի խոսվածքում գրանցվել է *թօխը*, Մուշի բարբառի Կոպ գյուղի խոսվածքում՝ *թօխըրը* տարբերակները:

Հ. Սկրտչյանը Կարինի բարբառում արձանագրել է *թօխրա* տարբերակը⁴²: Ըստ Ս. Վարդանյանի՝ Խոփայի համշենահայերը հողակոշտերը մանրելու համար օգտագործել են *թօրխ* կոշվող երկբերան ուրագանման երկարապոչ բրիչը⁴³: Ազգագրական գրականության մեջ *թոխուր* տարբերակը գրանցվել է նաև Դարադադի խոսվածքում⁴⁴:

Գրանցվել են նաև բառակազմական տարբերակներ. Մեղրու բարբառում արձանագրվել է *բրդըթոխը* («բաղի թոխը») բարդությունը⁴⁵, Համշենի բարբառի Խոփայի խոսվածքում՝ *թօրխ էնուշ* «հողը թորխով մշակել» հարադիր բարդությունը⁴⁶: Դարաբադի բարբառում արձանագրվել է *թոխրավ տալ* հարադիր բարդությունը ինչպես ուղիղ՝ «քլունգով քանդել», այնպես էլ փոխաբերական՝ «վատ՝ անվարժ կերպով խոսել, մի բան անել» իմաստներով⁴⁷:

Համշենի բարբառում գրանցվել են ինչպես *թոխրուշ* «հողը բրիչով փշրել մանրել», այնպես էլ *թօրխուշ* «հողը թորխով մշակել» (նույն բարբառի Խոփայի խոսվածք) տարբերակները: Դարաբադի բարբառում *թոխրել* բառն ունի նաև փոխաբերական իմաստներ՝ «իրարու հետ թշնամացնել, մեջերնին կռիւ ձգել»⁴⁸, «տակից գլխից խոսել, վայրիվերո դուրս տալ»⁴⁹:

Դարաբադի բարբառում գրանցվել են *թոխըր* բառով կազմված արտահայտություններ ու դարձվածքներ. «*Թոխըրը մեջը գցել ...* իրարու հետ թշնամացնել, կռուցնել: *Թոխըրը քաշել տուն քանդել...* տունը աւերել, կործանել»⁵⁰:

դ. *Խազմա*

Ըստ Հ. Աճառյանի՝ բառը փոխառված է թուրքերեն *kazma* «բրիչ, փայտաստ» ձևից⁵¹:

⁴² Տե՛ս Հ. Ս. Սկրտչյան, Կարնո բարբառը (հնչյունաբանություն, ձևաբանություն, բառարան), Եր., 1952, էջ 143:

⁴³ Տե՛ս Ս. Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Եր., 2009, էջ 290:

⁴⁴ Տե՛ս Հ. Հովսեփյան, Դարադադի հայերը, հ. 1, Ազգագրություն, Եր., 2009, էջ 173:

⁴⁵ Տե՛ս Վ. Հ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 88:

⁴⁶ Տե՛ս Ս. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 290:

⁴⁷ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան (ՀԼԲԲ), հ. Բ, Եր., 2002, էջ 124:

⁴⁸ ՀԳԲ, էջ 372:

⁴⁹ ՀԼԲԲ, էջ 124:

⁵⁰ ՀԳԲ, էջ 372:

⁵¹ Տե՛ս Հ. Աճառյան, Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրայ եւ թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ, համեմատութեամբ Վանի, Դարաբադի եւ Նոր Նախիջևանի բարբառներուն (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ), Մոսկուայ-Վաղարշապատ, 1902, էջ 155: Բառի ստուգաբանությունը տե՛ս «Этимологический словарь тюркских языков. Общетюркские и межтюркские лексические основы на буквы “К”, “Қ”», М., 1997, էջ 185–186:

ՀԲԱ նյութերում բառանունը մի քանի հնչյունական տարբերակներով գրանցվել է 73 խոսվածքներում: *Խազմա* տարբերակը գրանցվել է 22 խոսվածքներում՝ ընդգրկելով արևմտյան խմբակցության Մուշի (17), Խարբերդ-Երզնկայի (2), Եվդոկիայի (1), Պոլսի (1) և արևելյան խմբակցության Ջուղայի (1) բարբառները: Խարբերդի Բազմաշեն և Մոտկանի Մրցանք գյուղերի խոսվածքներում գրանցվել է *խրզմա* տարբերակը: Նախիջևան քաղաքի և Արտաշատի շրջանի Արևատ գյուղի խոսվածքներում փաստվել է *կազմա*, իսկ Սիսիանի շրջանի Ուզ գյուղի խոսվածքում՝ *կ'սզմա* տարբերակները: *Ղազմա* (նաև *ղազմա*, *ղօազմա*, *ղրազմա* հնչաձևերով) տարբերակը գրանցվել է 44 խոսվածքներում՝ ընդգրկելով արևմտյան խմբակցության Խարբերդ-Երզնկայի (1), Եղեսիայի (2), Շապին-Կարահիսարի (1), Ակնի (1), Տիգրանակերտի (2), Մուշի (4), Վանի (1), Կարինի (21) և արևելյան խմբակցության Երևանի կամ Արարատյան (4), Ջուղայի (4), պարսկահայոց (2), Ղարաբաղի (1) բարբառները: Մարաշ քաղաքի և Բեյլանի Սովոլուխ և Աթրխ գյուղերի խոսվածքներում գրանցվել է *ղազմօ* բառաձևը:

Ազգագրական գրականության մեջ *ղազմա* տարբերակը գրանցվել է Իրանի Չարմահալ գավառի հայկական գյուղերի խոսվածքներում⁵²:

ե. *Չափա*

Բառանունը փոխառյալ է իտալերեն *zappa* ձևից⁵³, որ իտալերենում և եվրոպական որոշ լեզուներում նաև «բրիչ» նշանակությունն ունի: Ինչպես նշում է Հ. Աճառյանը, եվրոպացիները, այդ թվում և իտալացիները, գաղութներ ունեին Կոստանդնուպոլսում, որտեղի հայերը շփման մեջ էին իտալացիների հետ, որի արդյունքը իտալերեն մի շարք բառերի, այդ թվում և *չափա* բառի փոխառությունն էր Պոլսի բարբառում⁵⁴:

Բառը ՀԲԱ նյութերում «երկբերան բրիչ» նշանակությամբ գրանցվել է Պոլսի (1) և Արաբկիրի (1) բարբառներում: Բառանունը նույն նշանակությամբ Գ. Մխալյանը փաստել է Պարտիզակի խոսվածքում⁵⁵, իսկ Ս. Վարդանյանը՝ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքում⁵⁶:

Ըստ Ն. Մկրտչյանի՝ Գամիրքում *չափա* են անվանել ուրագանձան բրիչը, որն օգտագործել են քաղհանի ժամանակ⁵⁷: Ըստ Վ. Բդոյանի՝ Արծվանիկի խոսվածքում քաղհանի հողուրագը կոչել են *չապպա*, որն օգտագործվել է նաև հողը փխրեցնելու համար⁵⁸:

Բարբառներում առկա են նաև բառակազմական տարբերակներ: Գամիրքի հայաբնակ գյուղերի խոսվածքներում գործածվել է *չափա էնել* «քաղհանել» հարադիր բարդությունը⁵⁹: Գ. Մխալյանը նշում է, որ Պարտիզակում կար

⁵² Տե՛ս Ա. Սարեան, Պատմութիւն Չարմահալ գաւառի, Թեհրան, 1980, էջ 382, Ա. քահ. Եղգարեան, Իրանի Չարմահալ գաւառը, Թեհրան, 1963, էջ 52:

⁵³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ, էջ 570:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵⁵ Տե՛ս Գ. Յ. Մխալեան, Պարտիզակն ու պարտիզակցին, Գահիրե, 1938, էջ 908:

⁵⁶ Տե՛ս Ս. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 94, 312:

⁵⁷ Տե՛ս Ն. Ա. Մկրտչյան, Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը, էջ 445:

⁵⁸ Տե՛ս Վ. Հ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 94:

⁵⁹ Տե՛ս Ն. Ա. Մկրտչյան, Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը, էջ 445:

«չափաճի... կոչուած այր գործատրներու դասակարգ մը», որոնք հողատերերի կողմից տարին մեկ կամ երկու անգամ վարձվում էին հողամշակման աշխատանքների («առաջինը՝ բահով, իսկ երկրորդը՝ քաղէն վերջ՝ բրիչով») համար⁶⁰: Նշված չափաճի բառանունը հետաքրքիր է նրանով, որ չնայած գործածվել է հայկական միջավայրում, բայց կազմված է իտալերեն *zappa* ձևից և թուրքերեն *-ճի* (արհեստներ և զբաղմունք նշանակող) գոյականակերտ ածանցից: Ի դեպ, մեր ուսումնասիրած բոլոր խոսվածքներից միայն Պարտիզակի խոսվածքում է գրանցվել չափաճի բառաձևը:

գ. *Կիրկա*

Բառի փոխառության աղբյուրը հայերենի բառարաններում և գրականության մեջ չենք գտել: Կարծում ենք, որ այն փոխառված է թուրքերեն *kerki* «կացին» ձևից, որ մաս «բրիչ» նշանակությունն ունի⁶¹, թեև բացառված չէ, որ որոշ խոսվածքներում այն փոխառյալ լինի միջնորդ լեզվից՝ ռուսերենից՝ *кирка* «բրիչ», որը, ըստ ռուսերենի ստուգաբանական բառարանների, փոխառյալ է թուրքերեն *küräk, küräk* «բահ», «թի» ձևից⁶²: ՀԲԱ նյութերում «բրիչ» նշանակությամբ *ք'նրեդ* բառանունը գրանցվել է Նիկոմեդիայի Խասկալ գյուղի խոսվածքում: Հ. Աճառյանը Պոլսի բարբառում փաստել է *քիրեկ*, իսկ Վանի բարբառում՝ *քիրսագ* «թի» բառանունները⁶³:

ՀԲԱ նյութերում *կիրկա* բառանունը *կիրկի, կիրկա, կիրգա* հնչյունական տարբերակներով գրանցվել է 17 բնակավայրի խոսվածքներում և հիմնականում ընդգրկում է Մուշի (5), Վանի (1), Երևանի կամ Արարատյան (8), Խոյ-Մարաղայի (3) բարբառները: Լոռու Կուրթան գյուղի խոսվածքում գրանցվել է *կիրկի* եզակի տարբերակը:

է. *Մարկեդ*

Ըստ Հ. Աճառյանի՝ այն հունարեն «μαρέλη, μάρελλα «բրիչ, փայտաստ» բառից է»⁶⁴: Այն վկայված է V դ. մատենագրության մեջ. «... զի մի՛ խնուցուն և գաղբն արտաքս չտայցեն, ազգի ազգի հայթայթանս հայթայթենք՝ ձողիք և երկայնակոթ ինչ մարկեդօք մաքրել...»⁶⁵: Ավելի ուշ շրջանում բառանունը վկայվել է «Վարք հարանց» ժողովածուում. «Եւ ետու նոցա փայտաստ և մարկեդ և քուրձ մի հսց, և ցուցի նոցա զվեմն ուստի զքարն հատանիցեն»⁶⁶:

⁶⁰ Տե՛ս Գ. Յ. Մխալեան, նշվ. աշխ., էջ 705:

⁶¹ Բառի ստուգաբանությունը տե՛ս «Этимологический словарь тюркских языков. Общетюркские и межтюркские лексические основы на буквы “К”, “Қ”», էջ 51–52:

⁶² Տե՛ս Մ. Փասեր, Этимологический словарь русского языка, т. 2, М., 1986, էջ 238, Ս. Я. Черных, Историко-этимологический словарь современного русского языка, т. 1, М., 1999, էջ 399:

⁶³ Տե՛ս Հ. Աճառեան, Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա..., էջ 365:

⁶⁴ ՀԱԲ, հ. Գ, Եր., 1977, էջ 285, մաս՝ ՆՀԲ, հ. Բ, էջ 225, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ, էջ 23, 37:

⁶⁵ Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոցն Պատղոսի, հ. 1, Վենետիկ–Ս. Վազար, 1862, էջ 114 (Մեկնութիւն Առաջին թղթոյն Տիմոթեայ, Ճառ ԺԳ):

⁶⁶ «Վարք Սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին ըստ կրկին թարգմանութեան մախնեսց», հ. 2, ԺԹ, Վասն քաղաքավարութեան հարցն, էջ 477:

Բառանունը ՀԲԱ նյութերում չի գրանցվել: Մեր ուսումնասիրած բարբառագիտական գրականության մեջ նույնպես փաստված չէ հայերենի բարբառներում բառանվան գործածության որևէ դեպք: Հ. Աճառյանը Ակնի բարբառում արձանագրել է այդ գործիքանիշ բառով կազմված *մարգղէլ* բայը («մանր մանր փորել... սերմը հողով ծածկել»)⁶⁷:

ը. *Բայթա*

Հ.Աճառյանը թուրքերենից փոխառյալ բառերի շարքում նշում է նաև *բայթա* (balta /պալթա/) բառանունը՝ «կացին» նշանակությամբ, որ գործածվել է Նոր Նախիջևանի և Վանի բարբառներում⁶⁸: Բառը նույն նշանակությամբ փաստել են Գ. Տեր-Վարդանյանը՝ Երզնկայի բարբառում, Ռ. Մարկոսյանը՝ Արարատյան բարբառում, Մ. Ասատրյանը՝ Ուրմիայի բարբառում՝ այն նույնպես համարելով փոխառություն թուրքերենից⁶⁹: ՀԲԱ նյութերում բառը «կացին» նշանակությամբ գրանցվել է Թուսկուլու (Վարդենիս) և Տանակերտ (Նախիջևան) գյուղերի խոսվածքներում: Ռուսերենում (օրինակ՝ օրենբուրգյան բարբառում) ևս առկա է նույն բառանունը՝ балта «նեղ սայրով կացին» նշանակությամբ, որը Մ. Ֆասմերը համարում է փոխառություն թյուրքական լեզուներից⁷⁰:

Բառի ստուգաբանությունը հայերենի բառարաններում չենք գտել: «Թյուրքական լեզուների ստուգաբանական բառարանի» 7-րդ հատորում գետեղված է առանձին բառահոդված, որտեղ բառը, հիմնական՝ «կացին» նշանակությունից բացի, ունի նաև «երկբերան բրիչ» նշանակությունը⁷¹:

ՀԲԱ նյութերում բառը «երկբերան բրիչ» նշանակությամբ գրանցվել է միայն Գյումուրի (Նախիջևան) խոսվածքում:

Հ. Աճառյանը Վանի բարբառում փաստել է *պալթանի* «փայտահար» ածանցավոր բառը: Նույն բարբառում գործածվել է *դրանը պալթա կախել*՝ «քովէն չհեռանալ, բան մը միշտ պահանջել, նեղել» դարձվածքը⁷²:

թ. *Նաջախ*

Բառը ծագում է պարսկերեն *nāčax* «կացնի տեսակ» ձևից, ինչի մասին անուղղակիորեն նշում է Հ. Աճառյանը⁷³:

Բառանունը վկայված է XVII դ. հայ մատենագրության մեջ. «... այլ էառ ի ձեռաց փայելիկն զկացնակն, որ է *նաջախն*՝ և նովաւ ուժգին բախմամբ եհար զգլուխ երիցոյն և կարի պատառեաց»⁷⁴:

⁶⁷ Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 285, ՀԳ-Բ, էջ 764, նաև՝ Մ. Ս. Գաբրիելեան, նշվ. աշխ., էջ 317:

⁶⁸ Տե՛ս Հ. Աճառեան, Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրայ..., էջ 281:

⁶⁹ Տե՛ս Գ. Տեր-Վարդանեան, Երզնկա-Կամախ գաւառաբարբառը եւ ազգագրական յուշեր, Երուսաղէմ, 1968, էջ 61, Ռ. Ա. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 368, Մ. Ե. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 242:

⁷⁰ Տե՛ս Մ. Փասմեր, Этимологический словарь русского языка, т. 1, М., 1964, էջ 118:

⁷¹ Տե՛ս Этимологический словарь тюркских языков: Общетюркские и межтюркские лексические основы на буквы "Л", "М", "Н", "П", "С", М., 2003, էջ 108–109:

⁷² Տե՛ս Հ. Աճառեան, Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրայ..., էջ 281:

⁷³ Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 424:

⁷⁴ Պատմութիւն Առաքել վարդապետի Գարիժեցոյ, գլ. ԺԳ, էջ 165:

Բառանունը «երկբերան բրիչ» նշանակությամբ գործածվել է Շիրակում, ինչի մասին վկայել է Վ. Բդոյանը⁷⁵: Նույն հեղինակը փաստել է ճիշտ այդպիսի երկբերան և նույն անունն ունեցող գործիքի գործածությունը նաև Կամոյում (այժմ՝ ք.Գավառ), որտեղ այն համարվել է «հովվական զենք»⁷⁶: Ագուլիսի բարբառում բառանունը փաստվել է «կացին» նշանակությամբ⁷⁷:

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցված չէ:

ժ. Ըրկուսի

ՀԲԱ նյութերում բառանունը «երկբերան բրիչ» նշանակությամբ գրանցվել է միայն Ագուլիսի (3՝ Ագուլիս /ըրկօսի/, Յոնա /ըրկօսին/, Տանակերտ /ուրկօսին/) և Մեղրիի (1՝ Կարճևան /ըրկօսի/) բարբառների որոշ խոսվածքներում: Է. Աղայանը բառանունը փաստել է Մեղրիի Մեծ թաղի խոսվածքում՝ *ըրկօտ*⁷⁸:

Բառանվան ստուգաբանությունը հայերենի բառարաններում և բարբառագիտական ու ազգագրական գրականության մեջ չենք գտել: Է. Աղայանը և Հ. Մուրադյանը բառանունն ընդգրկում են բարբառային բառերի ցանկում⁷⁹: Կարծում ենք, որ բառը *երկու* և *կույս* (*կողմ*) բառերի և *ի* վերջածանցի համադրությամբ կազմված բարդություն է՝ *երկկուսի*: Նկատի ունենալով գործիքի երկկողմանի (երկկուսի) (ինչպես երեքկողմանի՝ երեքկուսի, չորսկողմանի՝ չորեքկուսի, քառակուսի և այլն) լինելը՝ այդ տարածաշրջանում գործիքն անվանել են հենց այդպես: Ի դեպ, բարբառներում երբեմն ի հայտ են գալիս բառեր, որոնց ծագման հիմքում գործիքի կառուցվածքն է և ոչ թե նշանակությունը: Օրինակ՝ Ղարաբաղի բարբառի մի շարք խոսվածքներում արորը կոչել են *կեռ*՝ նկատի ունենալով կառուցվածքը՝ գործիքի կոր (կեռ) լինելը: Մեղրիում էտոցին տրվել է *կըռըղէնակ* անվանումը⁸⁰, նկատի ունենալով էտոցի շեղբի կորությունը, և այլն:

Զննարկենք հնչյունական տարբերակներից յուրաքանչյուրը տվյալ բարբառին հատուկ հնչյունափոխության տեսանկյունից:

Կարճևանի խոսվածքում գրանցվել է *ըրկօսի* տարբերակը: Այդ խոսվածքում բազմաձևանկ բառերում բառասկզբի *ե*-ն փոխվում է *ը*-ի այն բառերում, որոնց մեջ *ե*-ն գտնվում է *ը* ձայնորդից առաջ, շեշտի տակ գտնվող *ի*-ն, ներառյալ բառավերջի շեշտյալ *ի*-ն, ինչպես նաև հին հայերենի *ի*-ն (շեշտից առաջ կամ հետո) մեծ մասամբ մնում են անփոփոխ, բառամիջի *ու*-ն շեշտի տակ դառնում է *օ*⁸¹:

Մեղրիի Մեծ թաղի խոսվածքում գրանցվել է *ըրկօտ* տարբերակը: Մեղրիի բարբառում երկվանկ և բազմաձևանկ բառերի սկզբի անշեշտ *ե*-ն փակ վանկում դառնում է *ը*, վերջին բաց վանկի *ի*-ն շեշտից հետո դառնում է *է*, վերջին կամ վերջընթեր շեշտված վանկում *ու*-ն դառնում է *օ*⁸²:

⁷⁵ Տե՛ս Վ. Հ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 87:

⁷⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 82:

⁷⁷ Տե՛ս Մ. Զաքարյան, Ագուլիսի բարբառի բառարան (ինքնության բացահայտում), Եր., 2008, էջ 236:

⁷⁸ Տե՛ս Է. Աղայան, Մեղրու բարբառ, Եր., 1954, էջ 12:

⁷⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 297, Հ. Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 213:

⁸⁰ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 309:

⁸¹ Տե՛ս Հ. Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 27 (§ 45), էջ 35–36 (§ 78–79), էջ 41 (§ 108):

⁸² Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 32 (§ 33), էջ 41 (§ 69), էջ 52 (§ 92):

Ագուլիսի բարբառում գրանցվել է *ըրկօսի* տարբերակը: Այդ բարբառում բազմավանկ բառերի սկզբի *ե*-ն դառնում է *ը*, շեշտի տակ գտնված բառավերջի *ի*-ն մնում է անփոփոխ, որոշ պարագաներում բառամիջի *ու*-ն դառնում է *օ*⁸³:

Նշված օրինաչափությունները նույնպես խոսում են բառանվան՝ *երկկուսի* բառի հնչյունափոխությունից առաջանալու տեսակետի օգտին:

Ժա. *Տրփրքանդի*

Է. Աղայանը բառը փաստել է Մեղրի բնակավայրի Փոքր թաղի խոսվածքում⁸⁴: Բարբառությունը կազմված է *տափ*, *քանդ* և *-ի/չ/* ձևությամբից: Գործիքի անվան ծագումը կապվում է նրա կատարած գործողության հետ («տափը քանդող գործիք»): Ի դեպ, Մեղրու բարբառում շատ կան նման գործիքանիշ բառեր, ինչպես՝ *քընըխաննի* «կրակխառնիչ» (թոնրախառնիչ/չ/), *տի՛րի՛վհանրէ* «թթենու տերև կտրելու ցաքատ», *փըըըվքաննի* «փլավքամիչ»⁸⁵ և այլն:

Ժբ. *Ճանկացին*

Ըստ Վ. Բդոյանի՝ Կամոյում (Գավառ) գործածվել է *ճանկացին* անվամբ երկբերան բրիչ, որի մի կողմը կացին է եղել, իսկ մյուս կողմը՝ ճանկ: Բառանունը կազմված է գործիքի երկու կողմերի անվանումների համադրումից, որի առաջին բաղադրիչը՝ *ճանկ*, ծագում է պարսկերեն *čang* «թռչունի մագիլ, մարդու ճանկ, կեռ, կորացեալ, թեքեալ» ձևից⁸⁶, իսկ երկրորդ բաղադրիչը՝ *կացին*՝ ասորերեն *xaššānā* «բրիչ, կացին» ձևից⁸⁷:

Նույն անվանմամբ բրիչը Գառնիում գործածվել է ծառի ճյուղեր կտրատելու համար (մի կողմը՝ ուրագ, մյուս կողմը՝ կացին)⁸⁸:

ՀԲԱ նյութերում բառանունը չի գրանցվել:

Ժգ. *Քուլքա*

Հ. Աճառյանը Խարբերդի բարբառում գրանցել է *քուլպայ*, իսկ Ակնի և Արաբկիրի բարբառներում՝ *քուրպայ* տարբերակները⁸⁹: Մ. Գաբրիելյանը Ակնի բարբառում գրանցել է *քուլպայ* «փոքրիկ բրիչ» տարբերակը⁹⁰: Բալուում *քուլպա* կոչվող գործիքի գործածությունն է փաստել Վ. Բդոյանը⁹¹: Չարսանճագում *քուլպե* է կոչվել քաղհանի համար նախատեսված կացնանման փոքր գործիքը⁹²:

ՀԲԱ նյութերում բառանունը (*քուլքա*) «երկբերան բրիչ» նշանակությամբ գրանցվել է միայն Արաբկիրի բարբառում:

Բառանվան ստուգաբանությունը չենք գտել:

ՀԲԱ նյութերում գրանցվել են «երկբերան բրիչ» հասկացության հազվադեպ հանդիպող այլ բառանուններ ևս, ինչպիսիք են՝ *թիրախ* (գ. Ծայծակ /Արճեշ/), *լոմ* (գ. Փաղրվան /Կարս/, գ. Ալխաձե /Աբխազիա/, ք. Ախալքալաք, Հին Ջուղա),

⁸³ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Եր., 1935, էջ 44, 58, 74–77:

⁸⁴ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 12:

⁸⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 298, 332, 334:

⁸⁶ Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 184:

⁸⁷ Տե՛ս նույն տեղը, հ. Բ, Եր., 1973, էջ 560:

⁸⁸ Տե՛ս Վ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 88–89:

⁸⁹ Տե՛ս ՀԳԲ, էջ 1123:

⁹⁰ Տե՛ս Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն, աշխատասիրեաց դկտ. Մ. Ս. Գաբրիէլեան, Վիեննա, 1912, էջ 355:

⁹¹ Տե՛ս Վ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 94:

⁹² Տե՛ս Գ. Ս. Երեւանեան, Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, 1956, էջ 574:

խաշա (գ. Բագմաշեն /Խարբերդ/), *խօտկէռ* (գ. Էզնախոջա /Մանազկերտ/), *ծրկօտէզ'*, (գ. Շահունյանավան /Շամախի/), *սիսպու* (գ. Ուլյա-Նորաշեն /Նախիջևան/, գ. Ալիջան /Սուրմալու/), *փիյիչ* (ք. Հաջըն):

Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ նույնպես վկայված են հազվադեպ հանդիպող տարբերակներ: Հ. Աճառյանը Առտիալի բարբառում արձանագրել է *փորիչ* «բահ, բրիչ» տարբերակը, բառանուն, որը վկայված է դեռևս «Գիրք վաստակոց»-ում. «Եւ եթէ *փորչով* շինեն զգետինն ի լեռնն՝ լաւ է, քան լծովքն. բայց թէ վասն գետնին շատութեանն չկարէ գորել փորիչն՝ նա ապա լծօքն»⁹³: Վ. Բողոյանը գրանցել է *կաղտիկ /գաղտիկ/, էրզուպերնեն փիղաղ* (Սասուն)⁹⁴, Գ. Մխալյանը՝ *քաղնիչ* (Պարտիզակ) տարբերակները⁹⁵,

Այսպիսով, հողափոր գործիքների շարքում կարևոր տեղ գրավող երկբերան բրիչը հայերենի բարբառներում կոչվել է ավելի քան 20 բառանուններով: Անշուշտ, բառագուգաբանությունների մեծ թվաքանակի հարցում կարևոր դեր է խաղացել այն հանգամանքը, որ գործիքը, ըստ նշանակության, ունեցել է երկու կողմերի (սայրերի) տարբեր համակցություններ՝ ուրագ և կացին, ուրագ և բիզ, ուրագ և մուրճ, ուրագ և թակ, բիզ և կացին, բահ և կացին, կեռ և կացին, ճանկ և կացին, ճանկ և ուրագ և այլն, սակայն դա որոշիչ չէ, քանի որ, ըստ մեր հետազոտության, տարբեր համակցություն ունեցող գործիքները որոշ տեղերում կոչվել են նաև միևնույն անունով, իսկ միևնույն համակցություն ունեցող գործիքը տարբեր տեղերում մեծ մասամբ կոչվել է տարբեր անուններով: ՀԲԱ նյութերում խոսվածքների քանակով լայն տարածական ընդգրկում ունեն *քունգ* (250 խոսվածք), *փայտաս* (120), *խազնա* (73), *թոխր* (60) բառանունները՝ իրենց հնչյունական տարբերակներով, սահմանափակ տարածական ընդգրկում ունի *կիրկա* (17) բառանունը, հազվադեպ հանդիպող բառանունների թվին են դասվում՝ *ըրկուսին* (4), *լոմ* (4), *չափա* (2), *սիսպու* (2), *խաշա* (1), *թիրախ* (1), *խօտկէռ* (1), *ծրկօտէզ'*, (1), *փիյիչ* (1), *բայթա* (1), *քուլբա* (1): Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ նույնպես վկայված են հազվադեպ հանդիպող բառանուններ, ինչպիսիք են՝ *ճանկացին*, *տրփրքանդի*, *հողուրագ*, *նաջախ*, *փորիչ*, *կաղտիկ* և այլն:

А. А. АБРАМЯН - Наименования понятия "мотыга" в армянских диалектах. - В ряду землеройных орудий важное место занимает мотыга, которая в армянских диалектах имела разные наименования — *p'aytat*, *t'oxr*, *kirka*, *k'lung*, *markel*, *arkosi*, *balt'a*, *t'irax*, *lom*, *xač'a*, *xazma*, *č'ap'a*, *xōtkēr*, *holurag*, *piru*, *p'iyič'*, *k'ulba*, *cəkōtēg'* и т.д.

В статье рассматривается этимология большинства отмеченных выше наименований, представляются некоторые слова и словосочетания, образованные от них, на основе 500 говоров армянских диалектов дается их ареальное описание.

Наименования *p'aytat* и *markel* засвидетельствованы еще с V века, а другие — с более позднего периода.

⁹³ «Գիրք վաստակոց, թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ», Վենետիկ–Ս. Ղազար, 1877, Դումն ԺԸ, էջ 17:

⁹⁴ Տե՛ս Վ. Բողոյան, նշվ. աշխ., էջ 82, 90:

⁹⁵ Տե՛ս Գ. Յ. Մխալեան, նշվ. աշխ., էջ 908: